
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՐԿՆԱԿԻ ՀԵՐՈՍ

ՆԵԼՍՈՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ
(Ծննդյան 100-ամյակի առթիվ)

ԿԼԻՄԵՆՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Խորհրդային Միության 1941–1945 թթ. Հայրենական մեծ պատերազմի պատմության տարեգրության մեջ ոսկե տառերով է գրված հայ ժողովրդի արժանավոր զավակ, լեգենդար օդաչու Նելսոն Գևորգի Ստեփանյանի անունը: Նրա մասին



Խորհրդային Միության նավատորմի ծովակալ, Խորհրդային Միության հերոս Հովհաննես Ստեփանի Բսակովը գրել է. «Այդ հիանալի, խիզախներից խիզախ մարդու մասին կարելի է և պետք է գրել շատ գրքեր, այնքան շատ բան է կապված նրա պանծալի անվան հետ... Ստեփանյանը մարտական շատ գործողությունների ղեկավար ու կատարող է եղել, ոմբազրոհային հարվածներ է հասցրել գերմանական նավերին բաց օդում ու ռազմածովային բազաներում, օդանավակայաններին, մարտկոցներին, տանկերի շարասյուներին ու մոտոհետևակին, հակառակորդի պաշտպանության առաջին գծին և այլ նպատակակետերի: Խորհրդային Միության կրկանկի հերոս, գվարդիայի

փոխգնդապետ Ստեփանյանն իր բազեններին տարել է թշնամու դեմ կատաղի ճակատամարտերի, հարվածել անողորմաբար, հաստատակամությամբ և նույնը սովորեցրել իր ենթականերին ու անձամբ ցույց տվել անսահման արիության, խիզախության և ռազմական արվեստի օրինակներ: Նա զոհվեց մարտում, սիրելի Բայթիկայի օդում, վերջնական հաղթանակի օրվանից մի փոքր ավելի շուտ, որի համար այնքան շատ բան է արել նա և որի համար զոհաբերել է իր կյանքը»¹:

Նելսոն Ստեփանյանը ծնվել է 1913 թ. ապրիլի 10-ին (հին տոմարով՝ մարտի 28-ին) Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում: Նրա հայրը՝ Գևորգ Կոնստանտինի Ստեփանյանը ծագումով երևանցի էր, մասնագիտությամբ հաշվապահ, մայրը՝ Վարդանուշ Լալազարյանը՝ ծննդով շուշեցի էր: Նրանք ունեցան չորս արու զավակ, որոնցից ավագը Նելսոնն էր²:

¹ И. С. И с а к о в. Армяне-моряки в Великой Отечественной войне.– Адмирал флота Советского Союза Исаков Иван Степанович. Сборник документов и статей. Ереван, 1984, с. 122, 124.

² Մյուս եղբայրների անուններն էին՝ Վիլսոն, Ստեփան և Դեմիլ: Ստեփանը զինվորական էր և զոհվել է 1935 թ., իսկ Վիլսոնը՝ 1939 թ. խորհրդա-ֆիննական պատերազմում (տե՛ս Չ. Բ ա լ ա յ ա ն. Ասք Խորհրդային Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի, նրա ծնողների և երեք եղբայրների մասին.– «Ավանգարդ», 20. III. 1985):

Երբ 1914 թ. օգոստոսի 1-ին սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, և Գերմանիայի դաշնակից Թուրքիան Կովկասյան ռազմաճակատում մարտական գործողություններ սկսեց Ռուսաստանի դեմ, մուսուլմանական տարրերը Շուշիում աստիճանաբար նախապատրաստվում էին հայերի դեմ ջարդեր կազմակերպել: Նելսոնի հայրը, կանխագուշակելով վտանգը, նույն ամսվա վերջերին ընտանիքը տեղափոխեց Երևան և բնակություն հաստատեց Եկմայան փողոցի վրա գտնվող թիվ 13 տանը: Այդ ժամանակ Նելսոնն ընդամենը մեկուկես տարեկան էր: 1920 թ. նա ընդունվեց Երևանի Մաքսիմ Գորկու անվան յոթնամյա դպրոցը: Դպրոցական հասակում նրա մեջ մեծ սեր արթնացավ ավիամոդելիզմի և ֆիզկուլտուրայի հանդեպ: Նա հաճախում էր Երևանի պիտոներ տան ավիամոդելիստների խմբակ, ինչպես նաև զբաղվում մարմնամարզությամբ: Ինչպես վկայում է Նելսոնի հայրը, որդու պատրաստած ավիամոդելները թռչում էին բոլորից բարձր և հեռու: «Միաժամանակ Նելսոնը սիրում էր ֆիզկուլտուրան, – նշում է հայրը, – նույնիսկ տան բակում նա տեղադրեց ձողափայտ ու օղակներ և օրվա մեջ մի քանի անգամ մարզվում էր դրանց վրա»³: 1926 թ. ուսման գերազանցիկ և ճանաչված ավիամոդելիստ ու մարզիկ Ն. Ստեփանյանին ընդունում են կոմերիտմիության շարքերը: Մեկ տարի անց՝ 1927 թ., ավարտելով դպրոցը (յոթնամյակը), Նելսոնը կոմերիտական ուղեգրով մեկնում է Բաքու և ընդունվում Սերգո Օրջոնիկիձեի անվան զինվորական հետնակային ուսումնարանը՝ չնայած նրան ձգում էր ավիացիան: 1931 թ. նա գերազանց գնահատականներով ավարտում է ուսումնարանը և շուրջ մեկ տարի աշխատում նավթավերամշակման գործարանում՝ սկզբում որպես սևագործ բանվոր, ապա՝ փականագործ: Աշխատանքին զուգահեռ նա հաճախում էր Բաքվի աերոակումբը: 1932 թ. գործարանի կուսակցական կազմակերպությունը 19-ամյա Նելսոնին ընդունում է կոմունիստական կուսակցության շարքերը: Հաշվի առնելով երիտասարդ կոմունիստի ավիացիային նվիրվելու ձգտումը՝ կուսակցության ուղեգրով Ն. Ստեփանյանը նույն թվականին ընդունվում է Բատայսկ քաղաքի (Դոնի Ռոստովի մարզ) քաղաքացիական ավիացիայի թիվ 1-ին դպրոցը: Այստեղ նա հնարավորություն ստացավ մոտիկից ծանոթանալ թռիչքային տեխնիկային, ամենօրյա քրտնաջան աշխատանքով տիրապետել օդաչուի բարդ մասնագիտությանը: 1935 թ. Ն. Ստեփանյանը գերազանցությամբ ավարտում է օդաչուական ուսումնարանը և որպես իր մասնագիտությանը լավագույն տիրապետող մասնագետի՝ թողնում են աշխատելու ուսումնարանում որպես հրահանգիչ-օդաչու: Նույն թվականին նա, որպես Բատայսկի օդաչուական ուսումնարանի լավագույն ֆիզկուլտուրնիկ, պարգևատրվում է «Պատրաստ աշխատանքի և պաշտպանության» կրծքանշանով⁴: Դա Նելսոնի առաջին պարգևն էր: 1938 թ. թռիչքային մեծ վարպետություն ունեցող հրահանգիչ-օդաչու Ն. Ստեփանյանին

³ Дважды герой Советского Союза Н. Степанян. Сборник документов и материалов. Ереван, 1968, с. 11–14.

⁴ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայրենական մեծ պատերազմի պատմության կարփնետի արխիվ (այսուհետև՝ ՀՀ ԳԱԱ ՊԲ ՀՄՊՊԿԱ), ֆ. 53, գ. 2, թ. 1:

տեղափոխում են Միներալնիե Վոդի և նշանակում քաղաքացիական ավիացիայի օդաչուների պատրաստման բարձրագույն դասընթացների հրահանգիչ-օդաչու: Բատայսկում Նելսոնը 1938 թ. ամուսնացել էր ավիամեխանիկ Ֆիրա Միխայլովնա Գրինշտատի հետ: 1939 թ. օգոստոսի 14-ին Միներալնիե Վոդի քաղաքում ծնվում է նրանց որդին՝ Վիլսոնը (Վիլիկը):

Մինչև Հայրենական մեծ պատերազմը Ն. Ստեփանյանը պատրաստեց բազմաթիվ օդաչուներ, որի համար 1939 թ. հունվարի 29-ին պարզևատրվեց «ԽՍՀՄ քաղաքացիական ավիացիայի զարգացման և ամրապնդման համար» պատվոգրով: Պատերազմի նախօրյակին Նելսոնը 300000 կմ անվթար թռիչքներ կատարելու համար ԽՍՀՄ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի հրամանով պարզևատրվեց «300000 կմ թռիչքների համար» թիվ 622 կրծքանշանով⁵, որը նա մինչև կյանքի վերջը կրում էր հպարտորեն:

Հայրենական մեծ պատերազմի սկսվելուն պես Ն. Ստեփանյանը դիմում է հրամանատարությանը՝ ռազմաճակատ մեկնելու խնդրանքով: Դիմումն անմիջապես հարգվում է, և նա հունիսի 23-ին ուղարկվում է Եյսկի (Կրասնոդարի երկրամաս, Ազովի ծովի ափին) ռազմաօդային ուսումնարանի տարածքում տեղաբաշխված 2-րդ պահեստային ավիացիոն գունդ՝ ռազմական ինքնաթիռների վրա վարժական թռիչքներ կատարելու համար: Այդ ժամանակ Նելսոնն ուներ պահեստի կրտսեր լեյտենանտի կոչում: Արագորեն տիրապետելով գրոհային «Իլ-2» ինքնաթիռի թռիչքային տեխնիկային՝ հրամանատարությունը կրտսեր լեյտենանտ Նելսոն Ստեփանյանին ուղարկում է Լենինգրադ (այժմ՝ Սանկտ-Պետերբուրգ), որտեղ նշանակում է ստանում Կարմրադրոշ բալթյան նավատորմի ռազմաօդային ուժերի 8-րդ ավիաբրիգադի 57-րդ ավիացիոն գնդի 2-րդ ավիաէսկադրիլիայում՝ որպես ավիաօդակի հրամանատար: Լենինգրադի հեռավոր մատույցները գերմանաֆաշիստական զավթիչների հարձակումներից պաշտպանելու մարտերում Ն. Ստեփանյանը ձեռք է բերում բավականաչափ փորձ: Հարավային ռազմաճակատում, հատկապես Նիկոլանի և Օդեսայի շրջանում իրադարձությունների կտրուկ վատթարացման հետևանքով, 57-րդ ավիագունդը շտապ ուղարկվում է Հարավային ռազմաճակատ, որտեղ նա կատարում է 10 մարտական թռիչք, ոչնչացնում շուրջ 200 հիտլերական, ջրասույգ անում հակառակորդի 2 ռազմանավ: Մարտերից մեկի ժամանակ ծանր վիրավորվում է և ընկնում թշնամու զավթած տարածք: Նրան գտնում են ուկրաինական պարտիզանները և օգնում անցնելու ռազմաճակատի գիծը: Ն. Ստեփանյանին տեղափոխում են Խարկովի հոսպիտալներից մեկը, որտեղ բուժվելուց հետո վերադառնում է Լենինգրադ և շարունակում մարտնչել հարազատ գնդում, պաշտպանել պաշարված քաղաքը: Հարավային ռազմաճակատում ու Լենինգրադի երկնքում կատարած 30 մարտական թռիչքների ժամանակ հակառակորդի կենդանի ուժի և տեխնիկայի հասցրած մեծ վնասների (հակառակորդը Նելսոնի էսկադրիլիայի հարվածներից կորցրել էր 8 տանկ, 51 ավտոմեքենա, 19 զենիթային հրանոթ և այլն) ու մարտերում ցուցաբերած

⁵ Նույն տեղում, թ. 3:

խիզախության համար Կարմրադրոշ բալթյան նավատորմի հրամանատար, փոխծովակալ Վ. Ֆ. Տրիբունցի 1941 թ. նոյեմբերի 24-ի թիվ 140 հրամանով Ն. Ստեփանյանը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով⁶: Հաշվի առնելով Նելսոնի մարտական բարձր վարպետությունը և հակառակորդի դեմ ձեռք բերած հաջողությունները՝ նավատորմի հրամանատարությունը 1942 թ. փետրվարի 19-ին թիվ 083 հրամանով կրտսեր լեյտենանտ Նելսոն Ստեփանյանին միանգամից շնորհում է ավագ լեյտենանտի, իսկ երեք ամիս անց՝ 1942 թ. մայիսի 15-ին՝ կապիտանի կոչում⁷:

Առաջին պարգևատրումից հետո մինչև 1942 թ. մայիսի 30-ը Ն. Ստեփանյանը կատարում է ևս 86 հաջող մարտական թռիչք, որոնց ընթացքում իր օդակի հետ ոչնչացնում է հակառակորդի 25 տանկ, 7 զրահապատ մեքենա, 102 ավտոմեքենա, մի քանի հարյուր զինվոր ու սպա, 3 փոխադրանավ՝ յուրաքանչյուրը 5000 տոննա ջրատարողությամբ, 2 պահականավակ և 1 ցանցանավ: 1942 թ. փետրվարի 28-ի մարտում Նելսոնն անձամբ ոչնչացրել էր հակառակորդի 1 փոխադրանավ: Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելի կատարելու և այդ ընթացքում ցուցաբերած արիության համար կապիտան Ն. Ստեփանյանը Կարմրադրոշ բալթյան նավատորմի հրամանատարի 1942 թ. հունիսի 9-ի թիվ 29 հրամանով պարգևատրվում է Լենինի շքանշանով⁸, առաջ քաշվում ավիակեսկադրիլիայի հրամանատարի տեղակալի պաշտոնում⁹:

Ավիակեսկադրիլիայի հրամանատարի տեղակալ, կապիտան Ն. Ստեփանյանը երկրորդ պարգևատրումից հետո մինչև 1942 թ. հոկտեմբերի 4-ը կատարած 26 թռիչքների ընթացքում անձամբ հակառակորդի 1 հաժանավ և 1 պահականավ խորտակելու, 1 ինքնաթիռ ոչնչացնելու և խմբակային մարտերում 9 ինքնաթիռ խփելու, 2 զենիթային մարտկոց ոչնչացնելու, նաև իր խմբի օդաչուների մարտը գերազանց դեկավարելու համար Կարմրադրոշ բալթյան նավատորմի հրամանատարի 1942 թ. հոկտեմբերի 21-ի թիվ 74 հրամանով պարգևատրվեց Կարմիր դրոշի երկրորդ շքանշանով¹⁰:

Հետաքրքիր է, որ մինչ այդ, դեռևս 1941 թ. դեկտեմբերի 28-ին, 57-րդ ավիագնդի հրամանատար մայոր Մորոզովը և գնդի կոմիսար, գումարտակային կոմիսար Կուզմինը Ն. Ստեփանյանին 38 մարտական թռիչքների ժամանակ հակառակորդին պատճառած նյութական և մարդկային զգալի կորուստների ու այդ ընթացքում ցուցաբերած քաջության համար ներկայացրել էին Խորհրդային Միության հերոսի կոչման, սակայն բյուրոկրատական ինչ-ինչ պատճառներով այդ պարգևատրումը ձգձգվել էր: Նրա անմիջական հրամանատարները խիզախ օդաչուի պարգևատրման թերթիկում նշել էին. «Համատեղ կատարած 38 թռիչքների ընթացքում նրա գլխավորած ավիաօդակը ոչնչացրել և շարքից հանել է 8 տանկ,

⁶ Центральный военно-морской архив РФ (այսուհետև՝ ЦВМА), ф. 88, оп. 219, д. 562, л. 295–296.

⁷ ЦВМА, личная карточка дважды Героя Советского Союза гвардии подполковника Н. Г. Степаняна, л. 1–2.

⁸ Նույն տեղում, թ. 304:

⁹ Նույն տեղում, թ. 285–286:

¹⁰ Նույն տեղում, թ. 302–303:

88 ավտոմեքենա, 32 զենիթային հրանոթ, 3 զրահամեքենա, 33 զենիթային ավտոմատ, 10 քարշակ, 8 բեռնասայլ, 1 շոգեքարշ, 1 զինամթերքի պահեստ, վառելիքով լի 2 ցիստեռն, 4 զենիթային գնդացիր, 1 մոտոցիկլիստ և մեծ թվով կենդանի ուժ»¹¹։ Ն. Ստեփանյանը հերոսի կոչման արժանացավ բավականաչափ ուշ՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1942 թ. հոկտեմբերի 23-ի հրամանագրով¹²։ Հրամանագրի հրապարակումից քիչ անց՝ 1942 թ. նոյեմբերի 4-ին, նա առաջ է քաշվում ավիաէսկադրիլիայի հրամանատարի պաշտոնակատարի պաշտոնում։ Դրանից հետո հերոս օդաչուն սովորում է ռազմածովային նավատորմի ռազմաօդային ուժերի ավիաօդակների և էսկադրիլիայի հրամանատարների համար նախատեսված դասընթացներում։ Այն ավարտելուց հետո 1943 թ. հունվարի 10-ին նրան շնորհվում է մայորի կոչում և նշանակվում ավիաէսկադրիլիայի հրամանատար իր հարազատ 57-րդ ավիագնդում¹³։ Խորհրդային Միության հերոսի բարձր կոչումն էլ ավելի է պարտավորեցնում Ն. Ստեփանյանին, որին ընտրում են նաև էսկադրիլիայի կուսակցական բյուրոյի քարտուղար։ Ինչպես նշում է Ն. Ստեփանյանի առաջին կենսագիրներից, Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության հիմնահարցի ուսումնասիրության երախտավորներից մեկը՝ պատմական գիտությունների թեկնածու Ե. Խալեյանը՝ «Նա իր հարուստ մարտական փորձը տալիս էր երիտասարդ օդաչուներին, անձնական օրինակով կոփում նրանց կամքը, սովորեցնում լինել կարգապահ, համարձակ, մարտերում փոխադարձաբար օգնել իրար և շարունակ ուժեղացնել թշնամուն հասցվելիք հարվածների թափը։ Ստեփանյանի անխախտ նշանաբանն էր՝ «Այսօր թշնամուն հարվածել ավելի լավ, քան երեկ, վաղը ավելի լավ, քան այսօր»¹⁴։ Խորհրդային Միության հերոս, ավիաէսկադրիլիայի հրամանատար, մայոր Ն. Ստեփանյանը 1943 թ. հունվարին ակտիվորեն մասնակցում է Լենինգրադի պաշարման վերացման մարտերին։

1943 թ. մարտին Ն. Ստեփանյանը կարճատև արձակուրդ ստացավ և մեկնեց հայրենիք։ Սկզբում եղավ Բաքվում և Թբիլիսիում, ապա՝ Երևանում։ Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի շենքում հանդիպում ունեցավ մայրաքաղաքի աշխատավորության հետ։ Հերոսի հետ հանդիպումներ կազմակերպվեցին նաև Երևանի սպայի տանը, պիոներ պալատում։ Պետական համալսարանում լեզենդար օդաչուին ցնծությամբ դիմավորեցին ուսանողներն ու դասախոսները։ Հանդիպում ունեցավ նաև Լենինականի աշխատավորների հետ։ Ժողովրդական նկարիչ Մարտիրոս Մարյանը նկարեց հերոսի դիմանկարը։ Մարյանի աշխատասենյակում հանդիպեց Ավետիք Իսահակյանին և

¹¹ Центральный архив Министерства обороны РФ (այսուհետև՝ ЦАМО), инвентарный номер 46/4595, коробка 52, л. 413–414. Основание: ЦВМА, ф. 3, оп. 2421, д. 3, л. 97–99.

¹² «Правда», 24.X.1942; «Սովետական Հայաստան», 24. X. 1942:

¹³ ЦВМА, личная карточка дважды Героя Советского Союза, гвардии подполковника Н. Г. Степаняна, л. 1–2.

¹⁴ Ե. Մ. Խալեյան և Նելսոն Գևորգի Ստեփանյան. – Գիրք հերոսների մասին, Երևան, 1964, էջ 139:

Նաիրի Ջարյանին¹⁵: Հերոս օդաչուն եղավ նաև «Հայֆիլմ» կինոստուդիայում, հանդիպեց ժողովրդական դերասաններ Հրայրա Ներսիսյանի, Ավետ Ավետիսյանի, Դավիթ Մայրանի, կինոբեմադրիչ, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Համո Բեկնազարյանի, կինոբեմադրիչ Գուրգեն Բալասանյանի և շատ ուրիշների հետ¹⁶: Նկատենք, որ Գ. Բալասանյանը 1944 թ. եղավ ռազմաճակատում, հանդիպեց լեզենդար օդաչուի հետ, մարտական պայմաններում նկարահանեց նրան և 1948 թ. ստեղծեց «Նելսոն Ստեփանյան» փաստագրական ֆիլմը:

Արձակուրդից վերադառնալուց հետո Ն. Ստեփանյանը շարունակում է իր թռիչքները Լենինգրադյան ռազմաճակատում, հարվածներ հասցնում թշնամու նավերին, ռազմածովային բազաներին, օդանավակայաններին, տանկային շարայուններին, կենդանի ուժին՝ մշտական սարսափի մեջ պահելով հակառակորդին: Իզուր չէ, որ Նելսոնը ստացել էր «Բայթիկայի մրրկահավ» մականունը: Երբ նրա ինքնաթիռը դուրս էր գալիս «որսի», եթերը լցվում էր գերմանացիների տագնապալից ձայներով. «Ուշադրություն, ուշադրություն երկնքում Նելսոնն է»:

Հաշվի առնելով հերոս օդաչուի մարտավարական ունակությունները՝ հրամանատարությունը 1943 թ. հուլիսի 10-ին նրան ուղարկում է Կարմրադրոշ բայթյան նավատորմի ռազմաօդային ուժերի բարձրագույն սպայական դասընթացներում սովորելու, որն ավարտում է նույն թվականի հոկտեմբերի 16-ին: Վերադառնալով հարազատ գործնական շարունակում է մարտական թռիչքները: Լենինգրադի պաշարումը, որը տևեց 900 օր, լրիվ ավարտվեց 1944 թ. հունվարի 27-ին: Որպես հերոս քաղաքի ակտիվ պաշտպան՝ Ն. Ստեփանյանը պարգևատրվեց «Լենինգրադի պաշտպանության համար» մեդալով: Հիշեցնենք, որ խիզախ օդաչուն մինչ այդ պարգևատրվել էր նաև «Օդեսայի պաշտպանության համար» մեդալով:

1944 թ. փետրվարի սկզբներին Խորհրդային Միության հերոս, մայոր Նելսոն Ստեփանյանը նշանակվում է 47-րդ գրոհային ավիացիոն գնդի հրամանատար: Այդ գունդը մտնում էր Կարմրադրոշ բայթյան նավատորմի ռազմաօդային ուժերի 11-րդ գրոհային ավիացիոն դիվիզիայի մեջ: Մարտի վերջերին նրա գունդը տեղափոխվում է Ղրիմ և մարտական ակտիվ գործողություններ սկսում Թեոդոսիայի ազատագրման համար: 1944 թ. ապրիլի 13-ին հայ նշանավոր ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու ծննդավայրն ազատագրվում է գերմանաֆաշիստական զավթիչներից: Քաղաքի ազատագրման ժամանակ առավել աչքի ընկած 9 գործնական, այդ թվում՝ 47-րդ գրոհային ավիացիոն Գերագույն գլխավոր հրամանատար Ի. Վ. Ստալինի 1944 թ. մայիսի 4-ի թիվ 0115 հրամանով շնորհավորում է «Թեոդոսյան» պատվանուն: Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելի կատարելու և այդ ընթացքում ցուցաբերած խիզախության ու արիության համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944 թ. հուլիսի 22-ի հրամանագրով Ն. Ստեփանյանի գլխավորած 47-րդ գրոհային ավիացիոն պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով: Հուլիսի 27-ին ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի ժողովում, ծովակալ

¹⁵ Ն. Ջարյանի. Ուղեգրություններ, Երևան, 1953, էջ 224-228:

¹⁶ Дважды Герой Советского Союза Н. Степанян, с. 213-222.

Ն. Գ. Կուզնեցովի թիվ 01610 հրամանով Ն. Ստեփանյանին շնորհվում է գվարդիայի փոխգնդապետի զինվորական կոչում¹⁷: Մինչ այդ նա Սևծովյան նավատորմի հրամանատար, ծովակալ Ֆ. Ս. Օկոյաբրսկու 1944 թ. մայիսի 16-ի թիվ 0344 հրամանով արժանացել էր շնորհակալության՝ Ղրիմի ազատագրման մարտերում 47-րդ գրոհային ավիացիոն գնդի գործողությունները հատրեն ղեկավարելու և ցուցաբերած արիության համար¹⁸: Բացի այդ, Ղրիմի երկնակամարում և Սևծովյան մարտական գործողությունների թատերաբեմում կատարած սխրանքների համար Կարմրադրոշ բալթյան նավատորմի հրամանատարի 1944 թ. հունիսի 26-ի թիվ 55 հրամանով նա պարգևատրվել էր Կարմիր դրոշի երրորդ շքանշանով: Ն. Ստեփանյանի գունդն այդ ընթացքում կատարել էր 947 թռիչք, որոնց ընթացքում խորտակել էր հակառակորդի 8 փոխադրանավ, 12 արագընթաց դեսանտային բեռնանավ, 9 պահականավ, ավելի քան 2500 զինվոր ու սպա: Ապրիլի 22-ին Սևաստոպոլից Ռուսինիա տեղափոխվող նավախմբի ռմբահարման ժամանակ նա ջրասույգ էր արել 3000 տոննա ջրատարողությամբ փոխադրանավ¹⁹:

1944 թ. ամռանը Ն. Ստեփանյանի գունդը հաղթական մարտեր էր մղում Լենինգրադի հեռավոր մատույցներում և մերձբալթյան հանրապետությունների ազատագրման համար: Օգոստոսի 20-ին 11-րդ գրոհային Նովոռուսիյան կրկնակի կարմրադրոշ ավիացիոն դիվիզիայի հրամանատար, գնդապետ Մանժոսովը նրան ներկայացրեց Խորհրդային Միության կրկնակի հերոսի կոչման:

Ն. Ստեփանյանը հերոսաբար զոհվեց 1944 թ. դեկտեմբերի 14-ին Լատվիայի Լիբավա նավահանգստային քաղաքի համար մղված մարտերում. նա իր այրվող ինքնաթիռն ուղղել էր թշնամու բեռնանավերի կուտակումների վրա և իր կյանքի գնով ոչնչացրել դրանք: Այդ մասին են վկայում դիվիզիայի հրամանատար, գնդապետ Մանժոսովի գրած նամակը Նելսոնի հորը²⁰ և գրող-պատմաբան Ալեքսանդր Կովալենկոն²¹:

«Հայ ժողովրդի մասնակցությունը Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմին 1941–1945 թթ.» (2004 թ., ռուս.) մենագրության վրա աշխատելիս մեզ շատ հետաքրքրեց այն իրողությունը, որ Ն. Ստեփանյանին կրկնակի հերոսի կոչման ներկայացնելուց՝ 1944 թ. օգոստոսի 20-ից մինչև նրա զոհվելու օրը՝ 1944 թ. դեկտեմբերի 14-ը, հետո հրապարակի վրա եղած գրականության մեջ ոչինչ չկա այդ ընթացքում նրա կատարած սխրանքների և պարգևների մասին: Եվ, ահա, ՌԴ ռազմածովային կենտրոնական արխիվում որոնումներս պսակվեցին հաջողությամբ: Պարզվեց, որ Ն. Ստեփանյանի զոհվելուց հետո՝ 1944 թ. դեկտեմբերի 20-ին, 11-րդ գրոհային ավիադիվիզիայի հրամանատար, գնդապետ Մանժոսովը քաջարի հայորդուն ներկայացրել է պարգևատրման՝ Հայրենական պատերազմի

¹⁷ ЦВМА, личная карточка дважды Героя Советского Союза Н. Г. Степаняна, с. 1–2.

¹⁸ ЦВМА, личное дело Н. Г. Степаняна 1 170759, л. 7.

¹⁹ ЦВМА, ф. 88, оп. 2, д. 562, л. 297–2978 обор.

²⁰ Дважды Герой Советского Союза Н. Степанян, с. 165.

²¹ А. К о в а л е н к о. Вершинами мужества. М., 1995, с. 211.

1-ին աստիճանի շքանշանով: Երբ այդ փաստաթուղթը հասել էր Կարմրատրոշ բայթյան նավատորմի հրամանատար Վ. Ֆ. Տրիբունցինին, արդեն հայտնի էր դարձրել, որ 1944 թ. օգոստոսի 20-ին կազմված պարզնաթերթիկը Ն. Ստեփանյանին կրկնակի հերոսի կոչում շնորհելու մասին հաստատվել է, նավատորմի հրամանատարը նպատակահարմար չի գտել խիզախ օդաչուին պարզնատրել նոր շքանշանով: 1945 թ. փետրվարի 25-ին նա փաստաթղթի վրա մակագրել է՝ «Գոռնել, ընթացք չտալ»²²: Դրանից բառացիորեն մի քանի օր անց՝ 1945 թ. մարտի 6-ին, հրապարակվեց ԽՍՀՄ Չերագույն խորհրդի նախագահության հրամանագիրը՝ Նելսոն Ստեփանյանին Խորհրդային Միության կրկնակի հերոսի կոչում շնորհելու մասին²³:

Հարկ է նշել, որ 1944 թվականից Ն. Ստեփանյանն իր թռիչքները կատարում էր «Վրիժառու» կոչված «Իլ-2» գրոհային ինքնաթիռով, որը կառուցվել էր Հայկական ԽՍՀ Կոտայքի շրջանի Հացավան գյուղի կոլտնտեսության նախագահ Գրիգոր Հայրապետի Թևոսյանի անձնական խնայողությունների հաշվին²⁴: Նկատենք նաև, որ պատերազմի տարիներին նա կատարել է 239 մարտական թռիչք, որոնց ընթացքում ոչնչացրել է հակառակորդի 13 ռազմանավ, 85 տանկ, 27 ինքնաթիռ, ավելի քան 600 ավտոմեքենա, 140 զենիթային և դաշտային հրանոթ, 130 զնդացրային կետ, 40 երթուղային վագոն, 1 շոգեքարշ, 150 պահեստ և անցարան, ավելի քան 5000 զինվոր ու սպա: Այս ամենով այն ժամանակ կարելի էր զինել մի ամբողջ դիվիզիա: Մի թե սա լեզենդ չէ:

Չնայած Նելսոն Ստեփանյանն ապրեց ընդամենը 31 տարի, սակայն այնպիսի մի հետք թողեց Հայրենական մեծ պատերազմի տարեգրության մեջ, որ այսօր էլ հիշում և վառ են պահում նրա հիշատակը:

Սանկտ-Պետերբուրգի ռազմածովային նավատորմի կենտրոնական թանգարանի գլխավոր սրահում պահվում է կրկնակի հերոսի կիսանդրին: Նրա անունը ոսկե տառերով է գրված հերոս քաղաքի 900-օրյա պաշարման մասին պատմող թանգարանի փառքի սրահում: 1964 թ. դեկտեմբերի 28-ին Լատվիական ԽՍՀ Լիեպայա ծովափնյա քաղաքում Նելսոնի կատարած սխրանքի 20-ամյակի առթիվ կանգնեցվեց կոթող-կիսանդրի: Սակայն Լատվիան անկախանալուց հետո, այդ հուշարձանը տեղափոխեց Կալինինգրադ և տեղադրվեց քաղաքի կենտրոնական զբոսայգիներից մեկում:

Հերոսի հիշատակը վառ է պահվում նաև Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հանրապետություններում: 1950 թ. նոյեմբերի 8-ին Երևանի մանկական զբոսայգում բացվեց Ն. Ստեփանյանի արձանը (հեղինակ՝ քանդակագործ՝ Արա Մարգույան, ճարտարապետ՝ Գրիգոր Աղաբաբյան): Նրա անունով մեղալ կա, որով պարզնատրվում են Հայկական զինված ուժերի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի ռազմաօդային ուժերում աչքի ընկած օդաչուները:

²² ЦВМА, ф. 88, оп. 2, д. 562, л. 301–31 обор.

²³ «Правда», 7. III. 1945.

²⁴ «Коммунист», 26. XI. 1944.

Հերոսի հիշատակին նվիրված հուշարձան էր տեղադրված նրա ծննդավայր Շուշիում: Սակայն ԽՍՀՄ-ի փլուզումից և Ադրբեջանի անկախացումից հետո «եղբայր» ադրբեջանցիները ջարդուփշուր արեցին Անդրկովկասում միակ կրկնակի հերոսի հուշարձանը: Արցախյան ազգային-ազատագրական պատերազմի ժամանակ, երբ 1992 թ. մայիսի 9-ին ազերիներից ազատագրվեց Շուշին, այնտեղ անմիջապես նոր հուշարձան կանգնեցվեց: Հերոսի հուշարձանը կանգնեցվեց նաև Ստեփանակերտ քաղաքում:

Հարկ է նշել, որ Ադրբեջանում ոչ միայն ոչնչացրել են Նելսոն Ստեփանյանի հուշարձանը, այլև այդ հերոսի մասին հրատարակված աշխատություններում կեղծվել է իրականությունը: Այսպես, օրինակ, 1965 թ. հրատարակված «Ադրբեջանի զավակ Խորհրդային Միության հերոսներ» գրքում չի նշվում, որ Ն. Ստեփանյանը 1,5 տարեկանում ընտանիքով Շուշիից վերադարձել է Երևան և այնտեղ ապրել մինչև 1927 թ.²⁵: Երևանում ապրած տարիների մասին ոչ մի խոսք չկա նաև Բաքվում 1947 թ. հրատարակված «Խորհրդային Միության կրկնակի հերոս Ն. Ստեփանյան» գրքուկում²⁶:

Լեզենդար հերոսի ծննդյան 100-ամյակի առթիվ ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի և պետական համալսարանի հետ 2013 թ. մարտի 28-ին գիտագործնական գիտաժողով կազմակերպեց: Ապրիլի 10-ին հերոսի հիշատակին գիտաժողով կազմակերպվեց նաև Ուլյանովսկի համալսարանի և Ռազմաօդային ուժերի բարձրագույն ուսումնարանի (Բատայսկի նախկին թիվ 1-ին օդաչուական դպրոց, որտեղ սովորել է Նելսոնը) կողմից, որին մասնակցեց ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Մելքոնյանը:

Հայ ժողովրդի փառապանծ զավակ, Խորհրդային Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի կյանքը և մարտական լեզենդար սխրանքները փայլուն օրինակ կարող են լինել Հայկական զինված ուժերի և Լեոնային Ղարաբաղի պաշտպանության բանակի ողջ անձնակազմի, նաև հայ պատանիների համար՝ մեծ չափով նպաստելով նրանց ռազմահայրենասիրական դաստիարակության գործին:

ДВАЖДЫ ГЕРОЙ СОВЕТСКОГО СОЮЗА
НЕЛЬСОН СТЕПАНЯН
(к 100-летию со дня рождения)

КЛИМЕНТ АРУТЮНЯН

Резюме

Н. Г. Степанян родился 10 апреля 1913 г. в г. Шуши. С 1914 по 1927 гг. он жил в Ереване, окончил семилетнюю школу им. М. Горького, увлекался авиамоделизмом. В 1927 г. он поступил в Бакинское

²⁵ Герои Советского Союза—сыны Азербайджана. Баку, 1965, с. 290–292.

²⁶ Дважды Герой Советского Союза Нельсон Степанян. Баку, 1947, с. 8.

пехотное училище, которое закончил в 1931 г. с отличием, затем работал на Бакинском нефтеперегонном заводе слесарем. В 1932 г. Н. Г. Степанян поступил в училище Гражданского воздушного флота¹ в г. Батайске Ростовской области, которое с отличием закончил в 1935 г. и был оставлен в училище в качестве летчика-инструктора. В 1938 г. Н. Г. Степаняна направили на курсы высшего пилотажа в г. Минеральные Воды – летчиком-инструктором. Нельсон был женат, имел сына.

В годы Великой Отечественной войны морской летчик-штурмовик Н. Г. Степанян на самолете «Ил-2» сражался на Ленинградском, Южном, Крымском и Прибалтийском театрах военных действий, в качестве командира авиаэскадрильи и полка, от младшего лейтенанта достиг звания гвардии подполковника.

С июля 1941 г. по 14 декабря 1944 г. он совершил 259 боевых вылетов, во время которых лично потопил 17 различных кораблей противника, уничтожил свыше 80 танков и 600 автомашин, 64 орудия полевой и зенитной артиллерии, до 30 пулеметных точек, 1 паровоз и 40 вагонов, разрушил 4 переправы, сбил в воздухе 2 и уничтожил на земле 25 самолетов, уничтожив свыше 5000 солдат и офицеров противника. За образцовое выполнение заданий командования и проявленные при этом отвагу и героизм Н. Г. Степаняну дважды было присвоено звание Героя Советского Союза. Кроме того, он награжден орденом Ленина (2), Красного Знамени (3), медалями «За оборону Одессы» и «За оборону Ленинграда». Командир 47-го штурмового авиаполка Балтийского флота гвардии подполковник Н. Г. Степанян погиб в бою 14 декабря 1944 г. в районе порта Либава (Латвия) смертью героя – направив горящий самолет на транспортный корабль противника.

Светлую память легендарного летчика свято хранят в Республике Армении и в Нагорно-Карабахской Республике. В Ереване, в Шуши и в Степанакерте находятся памятники героя. В Армении учреждена медаль «Нельсона Степаняна», которой награждаются отличившиеся в боевой подготовке летчики, техники и связисты Вооруженных сил РА и Оборонительной армии НКР.